

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ**ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ**

95-րդ Պատրիարք Երուսաղէմի

ՎԱՐԴԱՎԱՌ**«Բարօք է մեզ աստ լինել»**

Վարդավառի տօնը մեր նախաքրիստոնէական շրջանէն մնացած գեղեցիկ յիշատակ մըն է՝ ընդելուզուած Աւետարանի մէկ ուրիշ աղուոր դրուագին հետ եւ դարձած բանաստեղծական եւ հոգեգրաւ:

Ան մէկ կողմէն մեր միտքը կը փոխադրէ հայ պատմութեան փառաւոր շրջաններուն, երբ հեթանոս Հայաստանը իր կրօնական եւ քաղաքական ամբողջ շքեղանքով հանդէս կու գար Բագրեւանդի աշխարհաժողովին, Արածանիի եզերքը, իր թագաւորով եւ քրմապետով, իր աւագանիովն ու ժողովուրդովը:

Միւս կողմէ մեր միտքը կը փոխադրուի այն սուրբ լեռան՝ որուն վրայ մեր Տիրոջ երկրաւոր կեանքի ամենէն լուսաւոր պահերէն մին տեսագրուեցաւ:

Վարդավառի աշխարհիկ խանդավառութիւնը փոխակերպուեցաւ այլակերպութեան հոգեւոր տեսիլքին: Արածանին եւ Թաբորը քովքովի եկան, երկնայինը փառաւորելով երկնային լոյսով ու խորհուրդով:

Պետրոս, տարիներ վերջ, իր Բ. թուղթին մէջ պիտի յիշէ այլակերպութեան դէպքը կարօտագին ու հիասքանչ: Ժամանակը որ անկէ վերջ եկաւ լեցնելու զինքը ծերութեամբ եւ հոգիով, չմեռցուց իր մէջ այդ լուսաւոր պահը: Անիկա տարիներ վերջ կը շարունակէ ապրիլ յիշողութեան փառաւոր աշխարհը, որ ճառագայթի մը պէս կը բխի իրմէ, իբրեւ Սուրբ անցեալի մը գերագոյն ժառանգութիւնը:

Մարդկային մտքի ու կեանքի ամենէն սքանչելի երեւոյթներէն մին է յիշողութիւնը: Մեր լսածներն ու տեսածները, մեր յղացքներն ու գաղափարները մէկ խօսքով մեր ֆիզիքական ու հոգեկան ապրումները կը շինեն գեղեցիկ շարանը մեր յիշողութեան, վերբերելով ժամանակին մէջ կտոր-կտոր եղած մեր ինքնութիւնը, իբրեւ գերագոյն ժառանգութիւնը մեր անցեալին:

Այլակերպութիւնը Պետրոսի կեանքին ամենէն սքանչելի վայրկեանը եղաւ: Իր կեանքը մեծաւ մասամբ անցած ձկնորսութեամբ, յետոյ Տիրոջ աշակերտութեան եւ ապա առաքելութեանը մէջ, բովանդակ անցեալի այս երկայնքին վրայ, տարիներ վերջ, իր մէջ կը գեղեցկանայ ու կը փայլի միակ ապրում մը, Թաբորի փառաւոր յիշատակը, ուր Յիսուս իր գերագոյն ներշնչումին մէջ կ'այլակերպի իր աշակերտներու աչքին առջեւ, եւ անոնց կ'երեւի իր աստուածային բնութեամբ: Թաբորի տեսարանին մէջ իր գերագոյն բնութիւնը կ'աճի եւ կը ծովանայ եւ դուրս կը թափի իր ապակիի թափանցիկութիւն ստացած մարմինէն: Իր հոգին աղօթքի մէջ գերմարդկայնացած, տեսանելի կը դառնայ իր մարմնի ընդմէջէն, նման բոցի մը որ կ'ուտէ իր պատերը եւ դուրս կը թափանցէ անոնցմէ:

Թաբորի խորհուրդը սակայն աստուածայինին յայտնութիւնը չէ միայն, այլ նաեւ մարդկայինին, որ իր կատարելութեանը կը հասնի մասնակցելով աստուածայինին: Յիսուսի մէջ մարդն ու Աստուած զատող պատերն ու գիծերը կը միանան, մարդն ալ իր կարգին կ'աստուածանայ: Առանց այս մեծ իրողութեան, քրիստոնէական երկու հիմնական սկզբունքները, փրկագործութիւն եւ կատարելութիւն կը դառնան

անկարելի եւ անիմաստ: Մարդը որդին է Աստուծոյ, եւ բովանդակ փրկագործութիւնը շարժումի եւ ազադակի մէջ է, որ մարդը գտնէ իր կատարելութիւնը:

Պիտի գայ օրը, եւ ասիկա անկարելի չէ քրիստոնէական ըմբռնումին համար, որ վերջնականապէս պիտի քօղազերծուի, պիտի խորտակուի մեր մարդութիւնն ու աստուածութիւնը իրարմէ պահող տարբերութիւնը: Յիսուսի մէջ այդ հրաշքը տեղի ունեցաւ Թաբոր լեռան վրայ, Աստուածայինն ու մարդկայինը իրարու հետ եղան եւ փառաւորուեցան:

Հոգեկան աշխարհի օրէնքն է այս, մենք յաճախ մեր առօրեային մէջ կ'անցնինք իրերու եւ երեւոյթներու քովէն, առանց կարենալ թափանցելու անոնց ներքին էութեան: Անոնք կը մնան գոց եւ մենք անհաղորդ անոնց հոգեկան թաքուն լինելութեան:

Բացառիկ պահերուն է միայն որ մեզի կը տրուի ունենալ անոնց տեսիլքը որ կը լուսաւորէ իրերը մեր աչքին: Աշակերտները Թաբոր լեռան վրայ տեսան իրենց վարդապետը լոյսերով ողողուած ու պայծառակերպ:

Ինքնաճանաչութիւնը հաւատքի լոյսն է, Աստուծոյ խորհուրդը, անձի զգացումին մէջ բացուած: Ինքզինքը աստուծով եւ աստուած ինքզինքին միջոցաւ ճանչնալու հոգեւոր գիտակցութիւնը, ինչպէս այնքան գեղեցիկ կերպով կը բարացուցէ Պօղոս Արաքեալը:

Այս է կերպը Աստուծոյ իր զաւակները ճշմարտութեան առաջնորդելու: Նախ անոնց կը ցուցնէ իր լոյսը, ապա այդ լոյսին մէջ ինքզինքը եւ այն իրողութիւնները, որոնց հանդիսատես ընել կ'ուզէ զանոնք: Երանի անոնց՝ որոնք ունեցած են այս պահերը իրենց կեանքին մէջ, որոնք մարգարէական արժէք կու տան կեանքին: Ներշնչումէ զուրկ անհատները չեն կրնար այլակերպիլ, գիտակցիլ կարենալու համար իրենց կոչումին եւ պարտականութեան:

Մովսէս եւ Նղիան իրեն կ'երեւին, իբրեւ օրէնք եւ մարգարէութիւն, անցեալի զոյգ պատգամաւորներ: Յեղին անցեալէն փրթած այս զոյգ խորհրդանիշները կու գան իրեն զինք հաշտ ընելու անցեալին, զօրացնելու իր մէջ պարտականութեան գիտակցութիւնը:

Մեծ գործիչներ իրենց ցեղին առաւելութիւններուն փառաւոր խտացումներն են: Անձի մը նկարագիրը այնքան աւելի տոկուն կ'ըլլայ եւ գեղեցիկ, երբ ցեղին առաքինութիւններն են անոր բաղկացուցիչ տարրերը: Ճշմարտապէս մեծ են անոնք, որ կրնան արթնցնել իրենց արեան մէջ նիրհող ազնուագոյն բնազդները, որ կրնան իրենց խղճմտանքին մէջ կեդրոնացած զգալ ցեղին պատմութեան փառաւոր տիպարները: Հոգեկան այս օրէնքով է որ Յիսուսի գիտակցութեան առջեւ կը վերբերին եւ իրեն հետ կը խօսակցին Մովսէս եւ Նղիան:

Մեր ժողովուրդը դարերով իր հոգեկան Թաբորին վրայ կեցած տուած է իր մեծ մարդերը, որոնք մեր պատմութեան լուսաւոր Թաբորը կը կազմեն: Այսօր եթէ ճարձատիլ սկսած են մեր հոգեկան շէնքին հիմերը, պատճառը այն է որ մեր հոգին պարպուած է տեսիլներէ, որովհետեւ մենք վար ենք իջած մեր պատմութեան եւ կեանքի Թաբորներէն, մեր անցեալը չի խօսիր մեզի, իսկ մեր ապագան տակաւ կը մթագնի, որովհետեւ մեր նայուածքը մեր շուրջը դիզուած առօրեայ ցեխին կը նայի միայն աստղեր տեսնելու համար, բայց ցեխէն աստղ չերեւիր: Երանի անոնց, որոնց կեանքը գերծ չէ այդ բարձրութեանց վրայ եղած ըլլալու յիշատակէն:

Հաւատացէք ձեր ազնուագոյն ձգտումներուն, ձեր մաքուր բնազդներուն, ձեր հոգեկան տեսիլներուն: Վայրկեաններ են անոնք, ուր մենք յատակ կերպով կը լըսենք մեր կոչումին ձայնը: Ձայնը որ պիտի ըսէ մեզի «դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ»: Անոնք որ կրնան կենալ իրենց Թաբորին վրայ, կրնան լսել այդ ձայնը: Ձայնը իրենց Աստուծոյն, իրենց անցեալին եւ իրենց ժողովուրդին: Եւ այդ ձայնին մէջէն փառաւորելու Աստուածը մեր հայերուն որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն: